ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/11-3

ք. Մարալիկ « 16» մայիսի 2019թ.

<<Մարալիկի առողջության կենտրոն >> ՓԲԸ -ն, ի դեմս տնօրեն՝ Վռամ Մելիքյանի, որը գործում է <<Մարալիկի առողջության կենտրոն >> ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Իմմունոֆարմ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Խ. Շաքարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __1__ օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

.1 Պայմանագրի գինը կազմում է **635900 (վեց հարյուր երեսունհինգ հազար ինը հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ բոլոր հարկերը: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Մարալիկի ԱԿ>> ՓԲԸ ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ Հ. Շահինյան 1 ՎՏԲ Հայաստան բանկ մարալիկի մ/ճ Հ/Հ16003001178900 ՀՎՀՀ 06001341	«Իմմունոֆարմ» ՍՊԸ ք. Երևան, Նարեկացի 32/32 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հ/Հ 1930009392180100 ՀՎՀՀ 00650292
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

« 16» մայիսի 2019թ. կ
ՄԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/11-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
...ոավ ...գրով ...ախ ...ատե ...ված ...չափ ...աբա ...ժնի ...համ ...արը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
9	33211250	C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեսթ-հավաքածու	ՌԴ	Շչաբանական հետազոտություն,արյան շիճուկում C ռեակտիվի սպիտակուցի որոշումը, ագլուցինացիոն մեթոդ, պահպանման ջերմաստիճանը՝ 2-8C:	տուփ	4900	24500	5	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
10	33211240	Ռեմոֆակտոր 100 տեստ	ՌԴ	Շչաբանական հետազոտություն, արյան շիճուկում ռևմատիկ ֆակտորի որոշում, ագլուցինացիոն մեթոդ, պահպանման ջերմաստիճանը՝ 2-8C:	տուփ	3500	17500	5	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:

11	33211260	Հակաստ ռեպտոլի զին -O որոշման թեսթ-հավաքա ծու	ՌԴ	Անտիտելի և ամտիստրեպտոլիզին O-ի որոշումը արյան շիճուկում ագլուցինացիոն մեխանիզմ, , պահպանման ջերմաստիճանը՝ 2-8C:	տուփ	4300	21500	5	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի րատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
17	33211190	Ցոլիկլոն անտի-A /արյան խմբի II որոշման թեսթ/	ՌԴ	10մլ* 1 ֆլակոն, նախատեսված է մարդու արյան խմբի որոշման համար, իմունոլոգիական հետազոտություն, ագրացինացիոն մեթոդ, պահպանման ջերմաստիճանը՝ 2-8C:	տուփ	800	2400	3	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի րատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
18	33211200	Ցոլիկլոն անտի-B/արյան խմբի III որոշման թեսթ/	ՌԴ	10մլ*1 ֆլակոն ,նախատեսված է մարդու արյան խմբի որոշման համար, իմունոլոգիական հետազոտություն, ագրացինացիոն մեթոդ, պահպանման ջերմաստիճանը՝ 2-8C:	տուփ	800	2400	3	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի րատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
19	33211220	Ցոլիկլոն անտի-Սուպեր / rh D ռեզուս համակարգի անտիգենի որոշման թեսթ	ՌԴ	10մլ*1 ֆլակոն ,նախատեսված է մարդու արյան ռեզուս գործոնի որոշման համար, իմունոլոգիական հետազոտություն, ագրացինացիոն մեթոդ, պահպանման ջերմաստիճանը՝ 2-8C:	տուփ	2200	6600	3	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի րատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:

21	33691420	TSH Թիրեոտրոպ հորմոն	ՌԴ	TSH Թիրեոտրոպ հորմոնի որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է արյան մեջ վահանաձև և հարվահանաձև գեղձի թիրեոտրոպ հորմոնի որշման համար:	տուփ	16000	80000	5	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
22	33691420	T3 տրիյոդթիրոնին ընդհանուր		T3 Տրիյոդթիրոնին ընդհանուր հորմոնի որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է արյան մեջ վահանաձև և հարվահանաձև գեղձիտրիյոդթիրոնին հորմոնի որոշման համար:	տուփ	17000	85000	5	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
24	33691420	Anti- TG Հակամարմիններ թիրեոգլոբուլին նկատմամբ	ՌԴ	Anti- TG Հակամարմիններ թիրեոգլոբուլինի նկատմամբ որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է արյան մեջ հակամարմինների որոշման համար :	տուփ	2000	6000	3	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
27	33691420	CORT Կորտիզոլ	ՌԴ	CORT Կորտիզոլ որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է արյան մեջ մակերիկամների կեղևի ստերոիդ հորմոնի՝ Կորտիզոլի կամ հիդրոկորտիզոնի որոշման համար:	տուփ	21000	21000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
28	33691420	TST Տեստոստերոն	ՌԴ	TST Տեստոստերոնի որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է արյան մեջ ստերոիդ անդրոգենային հորմոնի որոշման համար:	տուփ	21000	21000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի

											ратուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
29	33691420	17- OH- PROG Պրոգեստերոն	ՌԴ	17- OH- PROG պրոգեստերոնի որոշման թեսթ հավաքածու : Նախատեսված է ձվարանների ստերոիդ հորմոնի որոշման համար:	տուփ	30000	30000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի րատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
30	33691420	DHEA- S Դեհիդրոէպիանդրոստերոն-սուլֆատ	ՌԴ	DHEA- S Դեհիդրոէպիանդրոստերոն-սուլֆատի որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է մակերիկամների անդրոգեն հորմոնի որոշման համար:	տուփ	22000	22000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի րատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
31	33691420	AFP - ալֆա-Ֆետոպրոտեին	ՌԴ	AFP -ալֆա-Ֆետոպրոտեինի որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է մակերիկամների անդրոգեն հորմոնի որոշման համար:	տուփ	18000	18000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի րատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
32	33691420	HCV Ab Հեպատիտ <<C>> Հ.Մ	ՌԴ	HCV Ab Հեպատիտ <<C>> Հ.Մ որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է լյարդի ցիրոզի որոշման համար :	տուփ	15000	15000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի րատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
33	33691420	CHL/ IgG Խլամիդիա	ՌԴ	Chlamydia trachomatis-ի քլամիդիայի որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է սեռական ինֆեկցիա քլամիդիայի որոշման	տուփ	26000	26000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս

				համար:							փոլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի րատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
38	33691420	Trich. V.IgG Տրիխոմոնազ	ՌԴ	Trich. V.IgG Տրիխոմոնասի որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է արյան մեջ տրիխոմոնասի որոշման համար:	տուփ	32000	32000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փոլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փոլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի րատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
39	33691420	N. Gonorrh IgG Գոնորեա	ՌԴ	N. Gonorrh IgG Գոնորեայի որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է արյան մեջ գոնորեայի որոշման համար:	տուփ	32000	32000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փոլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փոլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի րատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
40	33691420	Gardn. V IgG Գարներելա	ՌԴ	Gardn. V IgG Գարներելայի որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է արյան մեջ գարներելայի որոշման համար:	տուփ	32000	32000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փոլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փոլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի րատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
41	33691420	Candida IgG Կանդիդոզ	ՌԴ	Candida IgG Կանդիդոզորոշմանի որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է արյան մեջ կանդիդիա սնկի որոշում համար:	տուփ	32000	32000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փոլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փոլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվի րատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
43	33691420	Anti - Lamblia Լյամբլիա	ՌԴ	Anti -Lamblia Լյամբլիայի որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է արյան	տուփ	36000	36000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք.	Համաձայն պատվե	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փոլի համար /եթե մատակարարը

		ՀՄ		մեջ լյամբլիա հակամարմինների որոշման համար:					Մարալիկ	որի	չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
44	33691420	Anti-Ascaris Ասկարիդոզ ՀՄ	ՌԴ	Anti-Ascaris Ասկարիդոզի որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է արյան մեջ ասկարիդոզի հակամարմինների որոշման համար:	տուփ	39000	39000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
45	33691420	Helico IgG Հելիկոբակտեր պիլորի ՀՄ	ՌԴ	Helico IgG Հելիկոբակտեր պիլորիի որոշման թեսթ հավաքածու: Նախատեսված է արյան մեջ հելիկոբակտեր պիլորիի հակամարմինների որոշման համար:	տուփ	34000	34000	1	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի աշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ատրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-

ապրանքների տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ ՄՆ նախարարի 2010թ. 17-Ն հրամանի

* ապրանքների պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝
ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող ապրանքները հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող ապրանքները հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, ապրանքների սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, ապրանքները հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

ԳՆՈՐԴ

<<Մարալիկի ԱԿ>> ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ
Հ. Շահինյան 1
ՎՏԲ Հայաստան բանկ մարալիկի մ/ճ
Հ/Հ16003001178900
ՀՎՀՀ 06001341

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Իմմունոֆարմ» ՍՊԸ
ք. Երևան, Նարեկացի 32/32
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930009392180100
ՀՎՀՀ 00650292

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 16» մայիսի 2019թ. կնքված
ՄԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/11-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Վճարման ժամկետը/վճարման ժամանակացույց	Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, յուրաքանչյուր ամսվա մինչև 15-րդ բանկային օրը, նախորդ ամսվա ընթացքում փաստացի մատակարարված ապրանքների 100%-ի չափով՝ Վաճառողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա:

ԳՆՈՐԴ

<<Մարալիկի ԱԿ>> ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ
Հ. Շահինյան 1
ՎՏԲ Հայաստան բանկ մարալիկի մ/ճ
Հ/Հ16003001178900
ՀՎՀՀ 06001341

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Իմմունոֆարմ» ՍՊԸ
ք. Երևան, Նարեկացի 32/32
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930009392180100
ՀՎՀՀ 00650292

/ստորագրություն/
Կ.Տ